

Էեդեմաբուխ աղբււր,
արարածք ի քէն զովանան:
Ընդրեալդ ի գաւրաց վերնոց,
գովելի ես որդւոց մարդկան:

20 Թագ զարմանալի կազմիս,
յարքայից գրլուխըս նըշան:
Փողովին ծաղկունք լերանցդ,
եւ տեսնին զքոյ գեղտ աննըման:

25 Իբր բղթագաւոր բազմիս,
Հոտ առնուս դու անմահութեան:
Լոյս վառիս ի գիշերի,
Հայածես զխաւարս հեռական:

30 Խոհեմ իմաստուն զինուոր,
սարսափին զաւրբն ի քէն դողան:
Յառ յեդեմական գրախտէն,
միշտ կանաչ եւ անթափական:

35 Կենաց պրտուղ ի լուսոյ,
անթարշամ եւ անապական:
Հոտ անուշ ի քէն բուրե,
փարատէ զցաւս մարդկան:

Ձայն քո տատրակի սիրուն,
ողջախոհ մըտաւք մաքրական:
Ղամբար աստրղ լուսաւոր,
ելանես ի յառաւառտեան:

40 Ծմելեալ խաղող ի յորթոյ,
քաղցրահամ բաժակ բերկրութեան:

16. Կ. էդեմաբուխ աղբուր: — 18. Կ. զորաց. —
19. Ա. որդոց: — 23. Կ. տեսնեն... գեղդ: — 26. Կ.
առնես: — 28. ԱԿ. զինուոր: — 32. Կ. պտուղն: —
40. Կ. յորթոյն: — 41. Ա. քաղցրաց համ: